կ.։ Նուիրատուութիւններից կայացել է 397 ր. 50 կ., ուրեմն բոլոր ստացված զուտ գումարը 1152 ր. 90 կ.։ Պէտք է ասել, որ պարոն Պալմ 300 ռուբլ թատրոնի վարձ վերցնելով, բաւական թանգ է վերցրել, բայց այդ բանը նրան ներելի է, որովհետև պ. Պալմը թատրոնը տաքցրել է, լուսաւորել է, երեկոյեան ծախսեր է արել և բացի այդ ինքն էլ իր գրպանից, (կամ նոյն 300 ր. թատրոնի վարձից) 50 ռուբլ նուիրել է սովալուներին։

—

Մեզ հաղորդում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, որ քաղաքացիք դիմել են սրբազան Աղշենանին և խնդրել են «պտղի» անուանված հոգևոր տուրքի հացերը մի տարի ժամանակով իրանց փոխ տալ։ Ասում են, որ հացերը արդէն ծախված են եղել։

—

Յունվարի 31-ին պ. Սլավիանսկի մի կօնցէրտ տուաց Արծրունու թատրոնում։ Կօնցէրտը կրկին շատ լաւ աջողվեցաւ։ Բացի մի քանի բազկաթոռներից բոլոր տեղերը թատրոնում բռնված էին, թատրոնը լի էր գլխաւորապէս զինուորներով։ Սլավիանսկի ստացաւ մի գեղեցիկ ընծայ քաղաքիս իւնկէրների դպրոցի երիտասարդ զինուորներից։ Ընծան մի արծաթեայ ոսկեզօծ թաս էր և մի պսակ։

—

Մեզ հաղորդում են ԵՐԵՒԱՆԻՑ որ այդ քաղաքից դէպի Ագուլիս Սադարագի գիւղի դաշտով անցնող ճանապարհի վրա ներքին-ազուլեցի մի երիտասարդ և Դեազ գիւղի երկու երիտասարդներ ցրտից սառել են։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Պատգամաւորների ժողովը ընդունեց օրէնքի այն ծրագիրը, որով ներքին նաւագնացութեան հարկերը փոփոխութեան են ենթարկվում։

Պատգամաւորների ժողովի նախագահը յայտնեց, որ մաքսային ցուցակի մասին վիճաբանութիւններ են սկսվելու, և խնդրեց ժողովի անդամներից, որ մի այսպիսի նշանաւոր հարցի քննութեան ժամանակ, քաղաքական հարցեր չը խառնեն։

Մաքսային և այլ և այլ հարկերի ցուցակի վերաբերութեամբ, երկրագործութեան և առևտրական մինիստր պ. Տիրար յայտնեց կառավարութեան կարծիքը։

Սէնատն ընդունեց մինիստրութեան առաջին յօդուածը, որը ձգտում է բարձրագոյն ուսումնական խորհրդարան կազմել։

Յունվարի 29-ին կայացած պատգամաւորների ժողովի մէջ, պ. Տիրար ապացուցեց, որ 1876-ից սկսած գաղթականութեան վճռաբաշխութիւնը լաւացել է, այս պատճառով էլ պ. Տիրար կարծում է, որ բամբակի հարկի վրա 24% աւելացնելը բաւական է։ Իսկ ինչ կը վերաբերի մետալական առարկաներին, մինիստրի խօսքերով, կառավարութիւնը համաձայն չէ դրա հարկը 40%-ից աւել բարձրացնել, չը նայելով, որ այդ մասին կազմված մասնաժողովը աւելի էր առաջարկում։ Սրանից յետոյ պ. Տիրար ապացուցեց, որ երկրագործութիւնը 1860-ի վերանորոգութենից մեծ օգուտներ քաղեց։ Մինիստրը կարծում է, որ հարկերի թեթևացնելը ոչ թէ երկրագործութեանն օգուտ կը բերի, այլ նա շահաւէտ կը լինի միայն միջնորդներին, որոնք երկրորդ ձեռքից ծախելով, աւելի օգուտ կը ստանային։ Երկրագործութեանն օգնելու սովորական միջոցն այն է, որ հեշտացվի դաշտերի ջրելը, տարածվի երկրագործական գիտութիւնը, և միջոց տրվի զիւղատնտեսական ժողովներ անելու, որով այդ գործին վերաբերեալ զանազան մասնագէտներ միջոց կունենան միմեանցից օգուտ քաղելու, և միասին մի ընդհանուր գործ առաջ մղելու։ «Մենք մեր ստացածից երկու անգամ աւելի մթերք ենք ուղարկում Անգլիա» աւելացրեց մինիստրը և պահանջեց, որ մաքսային ներկայ հարկերը ոչինչ փոփոխութեան չենթարկեն, որովհետև պ. մինիստրի կարծիքով, Ֆրանսիան այժ ունի մրցել օտար պետութիւնների արդիւնաբերութեան հետ, և մաքսային հարցը, որ ամեն երկրում ամենակենսական հարց է, կարող է ապագայ վերանորոգութիւնների և օտար երկրների հետ անելու բանագնացութիւնների ժամանակ, հիմնվել մաքսային ներկայ սիստէմայի վրա։

ԱՆԳԼԻԱ

—

Արդէն մօտենում է պարլամէնտի բացվելու ժամանակը։ Շուտով զանազան հարցեր ու վիճաբանութիւններ կեանք կառնեն։ Մի քանի հարցեր կը վճռեն, շատերն էլ նորից ծնունդ կառնեն։ Ժողովրդի ու լրագրութեան մէջ հազարաւոր բաներ են խօսում, մանաւանդ մինիստրութիւնը զբաղված է զանազան երազական երևակայութիւններով։ Ի հարկէ բաղմաթիւ են հարցերը, և պարլամէնտը ահագին գործեր ու ահագին պատասխանատուութիւն ունի ժողովրդի առաջ։ Այդ բազմաթիւ հարցերից, որը ամենաշատ է ըզբաղեցնում հասարակական կարծիքը, դա հողային օրէնքի ծրագիրն է։ Մեր ընթերցողներին պէտք է արդէն յայտնի լինի, թէ իրլանդական շարժումներն ինչ մեծ աղմուկ զըցեցին բոլոր Բրիտանիայում։ Մի կողմից այդ շարժումները, միւս կողմից անգլիական երկրագործ դասակարգի թշուառ վիճակը և վերջապէս այդ ահագին աղմուկները զարթեցրին պարլամէնտին իր լէտարգիայից, և ստիպեցին նրան վերջապէս հասկանալ, որ մոտեցել է ժամը, երբ այլ ևս անկարելի է արհամարհական կերպով վերաբերվել դէպի հողային հարցը։

Ասում են, որ պարլամէնտի առաջին վիճաբանութեան առարկայ կը լինի այս հարցը, և ամենքը մի առանձին զարմանքով են լսում այն, որ իբր նոյն իսկ պահպանողական կուսակցութիւնն է ընդունել այս հարցը իր հովանաւորութեան ու պաշտպանութեան տակ։ Հողային վերանորոգութիւններն իրանց հետ կը բերեն և մի ահագին կարգ ուրիշ անհրաժեշտ վերանորոգութիւնների, որոնցից ամենառաջինը, կերևի կը լինի և անգրաքիկ որդու արտօնութիւնների (մայորատ) ոչնչանալը, որը վաղուց արդէն ծանրացել է ժողովրդի վիճակի վրա։

Ներկայումս աֆգանական հարցն այլ ևս առաջուայ պէս չէ զբաղեցնում հասարակական ուշադրութիւնը, և մի քանի լրագիրներ ասում են, որ կամ Անգլիան նոր զօրքեր պէտք է ուղարկէ այնտեղ, և կամ բոլորովին պէտք է ձեռք վերցնի Աֆգանիստանում զբաղված բրիտանական փոքրիկ բանակից, որի դէմ հազարաւոր ցեղեր են զինված, և եթէ գեներալ Բօրէրտսի ահարկու անունը չը լինէր այժմ, վաղուց արդէն կորցել էր անգլիացիների հոտը այնտեղից։

Ասում են, որ աֆգանական ցեղապետները աշխատում են 12,000 զօրք հանել անգլիական բանակի դէմ, և միանգամից ջարդել նրանց։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ 2 յունվ.

Սալմաստ գաւառի դրութիւնը այժմ ամենասարսափելի վիճակի մէջ է հացի թանգութեան պատճառով։ Երկու տարվայ մմանց հակառակ եղանակները վնասեցին ցանքերին. 57 թւի չարունակ անձրևները բոլորովին փտեցրին արդէն հասունացած հունձքը իր տեղում, իսկ 58 թւում այնպիսի սաստիկ երաշտութիւն եղաւ, որ բոլոր ցանքերը չորացան։ Ցեղացիք Աստուծոյ բարկութեանն են վերաբերում այս պատուհասը։

Ցորենի մի բեռը (10 պուդ) Սալմաստում անցեալ տարիներում ծախվում էր 10 կամ 12 դրամով, իսկ այժմ ծախվում է 65 կամ 70 դրամով, կը նշանակէ որ առաջվայ արժէքից վեց անգամ աւելի թանգացել է, որ միանգամայն աղքատ ժողովրդի կարողութիւնից դուրս լինելով գնելը, չատերը սոված են մնում։ Երևակայեցէք, կան ընտանիքներ, որ տարեկան 100 կամ 150 դրամ (30—40 ռուբլի) վաստակ ունեն, որը երկու բեռ ցորենի գին է, այլ ևս որպէս կարող են մի ահագին ընտանիք կերակրել, որ մի ամսվայ մէջ երկու բեռ ցորեն կը սպառէ։

Բնիկ և տեղացի աղքատներին հնար կար մի կերպով կերակրել մինչև առաջիկայ տարվայ հունձքը, որովհետև այստեղի ունևորները բաւական խնամք ունեն չքաւորների վրա։ Բայց հասարակութեան ցաւի վրա մի երկրորդ աւելի զժուարին ցաւ աւելացաւ։ Սալմաստին սահմանակից Ցաճկաստանի Աղբակ կոչված գաւառից այժմ գաղթել են այստեղ աւելի քան 300 հայ ընտանիք։ Այդ ողորմելիները ռուս-թուրքական վերջին պատերազմի տարիներում անդադար հալածվելով և անդադար կոդոպտվելով քրդերից, հանգստութիւն չունեցան ոչ վարելու և ոչ ցանելու համար. և ինչ էլ որ գնել էին, երաշտութիւնից չորացաւ։ Այս պատճառով, վերջին չքաւորութեան հասած, և բոլորովին զրկվելով կերակրվելու կամ ապրելու միջոցներից, նրանք թողնում են իրանց հայրենիքը և գաղթում են Սալմաստ, մտածելով որ իրանց ազգակիցների մօտ ապրելու հնար կը գտնեն։

Բացի յիշեալ 300 ընտանիքը, Ցաճկաստանի հայ գաղթականների թիւը Սալմաստում օր ըստ օրէ աւելանում է։ Նրանք տարածվել են բոլոր հայոց գիւղերում և մուրացկանութիւն են անում։ Շատ անգամ մի մուրացկան 10—20 տուն է մտնում, հազիւ նրան մի պատառ հաց են տալիս, որովհետև ամեն տեղ լսում է մի և նոյն պատասխանը. «որ մէկիդ տանք, մենք էլ հաց չունենք ուտելու, մեր երեխաներն էլ քաղցած են»...

Եթէ ձմեռ չը լինէր, այդ թշուառների ապրուստը աւելի դիւրին կը լինէր։ Այս տարվայ սարսափելի ձմեռը աւելի զժուարացրեց նրանց ապրելը, օթեան պէտք է, հագուստ պէտք է, որ չունեն. քրդերը նրանց հագին մի կտոր չոր չեն թողել։ Այժմ լցվել են հայ գիւղացիների գոմերում և 5—10 ընտանիք բնակվում են միասին անասունների հետ։ Ցեղային հայերը չատ են ցանկանում այդ ողորմելիների կեանքը պահպանելու, բայց անհնարին բան է մի այսպիսի ահագին բազմութիւն կերակրելը, երբ տեղացիներից չատերը իրանք էլ հաց չունեն ուտելու։

Այս կողմերում Ցաճկաստանից գաղթել են, բացի հայերից, և չատ տասրի ընտանիքներ, որոնք բողոքական, կաթոլիկ և նեստորական դաւանութիւններին են պատկանում։ Բայց նրանց մասին հոգացողներ կան, նրանք եւրոպացի և ամերիկացի միսիոնարներ ունեն, որոնք ընկերութիւններ են կազմում, փող են հաւաքում և օգնում են իրանց սովեալներին։ Բայց հայերի համար ով է հոգ տանում։ Աղբակայ գաղթականների հետ եկած, ս. Բարդուղիմէոս առաքեալի վանքի վանահայր, և մի և նոյն ժամանակ Աղբակայ վիճակի յաջորդ Յովհաննէս վարդապետը դեռ անցեալ տարվայ նոյեմբերի 10-ին մի նամակ գրեց Թաւրիզ Պարսկաստանի առաջնորդ Գրիգոր արք-եպիսկոպոսին, խնդրելով, որ նորին սրբազնութիւնը օգնութեան ձեռք հասցնէ գաղթականներին և նրանց կեանքը մահից ազատելու համար կարգադրութիւններ անէ, —բայց նամակը մինչև այսօր մնացել է առանց պատասխանի...

Այժմ մեր միակ յոյսը մնացել է մեր հեռաւոր և մերձաւոր ազգայինների վրա, որ հոգ տանեն Աղբակայ գաղթականների մասին, գոնէ նրանք կարողանան այս ձմեռը անցկացնել, եթէ ոչ, այդ 300 ընտանիքից մինչև գալու հունձքի ժամանակը գուցէ կէսն էլ չի մնայ, եթէ այսպէս կը շարունակվի նրանց կեանքը։ Ցոյս ունենք, որ մեր օտարերկրեայ հայերը, մանաւանդ Ռուսաստանի հայերը, այնքան կարեկցութիւն կը զգան դէպի իրանց թշուառ եղբայրակիցները, որ չեն թողնի նրանք սովամահ լինեն։

Մարտիրոս Տէր-Մարտիրոսեանց

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դաւրէժ, 21 յունվարի

Երկար միջոց լինելով Դավրիժում, թող ներում ինձ մի քանի խօսք իմ այդ երկրամասայ կեցութեանս ունեցած տպաւորութիւններից ասելու ընթերցողին։ Այս միջոցներումս Դավրիժի հայերի գործելը թէ արական և թէ իգական սեռի մէջ կրթութիւն տարածելու համար, (ինչպէս արդէն յայտնի է բաւական թղթակցութիւններից) կարերի է առաջին բայը համարել, որ Դավրիժի հայ հասարակութիւնը վերջապէս արթնանալով իր անտարբերութիւնից, մի կողմ թողնելով իր անմիաբանութիւնները, աշխատում է կրթել իր զաւակներն, մինչդեռ նա առաջ ասում էր «էհ, վարդապետ կամ տէրտէր հօ չեն դառնալու» կամ թէ «աղջկանը ինչ հարկաւոր է կարդալը»—էնց այս սառն խօսքերն էին հասարակութեան կողմից, որ յետադէմ թողելով Արամեան դպրոցը, իգական դպրոցի բացմանը գլխաւոր արգելաւորն էին։

Իգական դպրոցի անհրաժեշտութիւնը մի երեք տարի առաջ թէ ուսուցչական և թէ այլ ժողովներում բացատրեց նոյն տարվայ հայ լեզուի ուսուցիչ Յակոբ Մելիք Յակոբեանցը, սակայն չը նայելով նաև սրբազան Անդրէաս առաջնորդի ցանկութեան այդ մասին, թէ տեղացոց անհամաձայնութիւնը, և թէ մի քանի անձանց գործած խորամանկութիւնները թոյլ չը տուին դպրոցի հիմնվելուն։ Բայց այժմ ի սրտէ ուրախ եմք, որ ոչ միայն մեր Դավրիժի եղբայրները ունեն իգական սեռի դպրոց, այլ և թատրոնական մի խումբ։

Թէ Արամեան, և թէ Լիլավայ թաղի ուսումնարանները, լինելով հիմնված եկեղեցու բակում, կից են նաև հասարակաց գերեզմանատանը։ Ուրիշ քաղաքներում գերեզմանատունները գտնվում են հեռու փոքր ինչ քաղաքից, իսկ Դավրիժի այդ գերեզմանատները լինելով առաջ քան ուսումնարանների հաստատվելը, քաղաքին մօտ։ Մինչև այսօր էլ չը նայելով, որ հայերը ունեն առանձին քիչ հեռու քաղաքի միջին մասից մի մեծ հանգստարան, սակայն մեծ մասամբ տեղացիք իրենց ննջեցեալները թաղում են այդ գերեզմանատներում, վախենալով պարսից գործած բարբարոսութիւններից։ Աներկայ ենք որ այժմեան նոյն տեղի վիճակաւոր առաջնորդ Դ. Մուշեղեանցը կը կարգադրէ այդ բանը։

Աբել Դ. Ապրեսեանց

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզից հեռագրում են, յունվարի 30-ից, որ Դէրէզ վարդապետը, որը սկսել էր ճանապարհորդել Աֆրիկայի միջով արևելքից դէպի արևմտեան ափը, մեռաւ Ուջիջիում, Ցանգանայկա լճի ափին։

***

Ադրիանուպոլում սարսափելի թանգութիւն, սով և մահ է տիրում, մանաւանդ փախստականների մէջ։ Նրանցից մէկ օրում սովից մեռաւ 65 մարդիկ։ Դիակների բերանում փայտի կտորներ գըտան, որոնցով թշուառները կամենում էին յագեցնել իրանց քաղցը։ Սովը տարածվում է վանում և Բայազէթում։ Ֆիլիպպօպոլում ապրում են 7000 փախստականներ. հիւպատոսները կարող են միայն նրանց երրորդ մասին հաղիւ օգնութիւն հասցնել։

***

Ասիական լրագիրները ներկայումս խօսում են ջինաց բոգդիխանի ֆինանսական դժուարութիւնների մասին։ Այս թագաւորը դեռ ևս պսակվելու համար իսկապէս չատ երիտասարդ է. բայց նրա պալատներում մինչև 70 կանայք են ապրում, որոնք մանաւանդ աչքի են ընկնում իրանց չորերի չքեղութեամբ։ Մետաքս, թաւիշ և այլ նիւթեր, նոյնպէս մարգարիտներ, որ կրում էին անցեալ տարի իրանց վրա վերոյիշեալ իշխանուհիք ճարեցակիսկ լուսնի եղբօրը նստեցան 250,000 տաէլներ, այսինքն հողային հարկի գումարը կէսից աւելի նստեցան, (տաէլ հաւասար է 2 ր. 50 կ.)։ Մի քանի ամիս առաջ, կանանցից մէկին թագաւորը ընծայեց մէկ վերարկու զարդարված ամենաթանկագին և ամենահաղուագիւտ մարգարիտներով։ Ցաւն այն է, որ սա արդէն միջահասակ կին է և այս պատճառով, եթէ վերարկուն նրա մօտ կը լինի նրա մահվան օրը, այն ժամանակ, որպէս սովորութիւն է, պէտք է չորերը այրեն։ Այդպիսի պատահարից վախենալով բոգդիխանը մի քանի անգամ փորձ փորձեց վերադարձնել այդ չքեղ վերարկուն, բայց իզուր, որովհետև պառաւ իշխանուհին ձեռքից չէ թողնում։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ